

«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» Ապահովագրական ՓԲԸ
Շինմոնտաժային ռիսկերի ապահովագրության
կանոններ

Բովանդակություն

1. Ընդհանուր դրույթներ	3
2. Ընդհանուր բացառություններ	3
3. Ապահովագրության ժամանակահատված	3
4. Ընդհանուր պայմաններ	3
5. Առանձնահատուկ բացառություններ	5

1. Ընդհանուր դրույթներ

Հաշվի առնելով պայմանագրում նշված Ապահովագրվողի գրավոր դիմումը, որը բոլոր գրավոր հարցաթերթիկների և դիմումների հետ միասին կազմում է սույն պայմանագրի անբաժանելի մասը՝ «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» Ապահովագրական Ընկերությունը (այսուհետև Ապահովագրող) Ապահովագրվողի կատարած վճարումների դիմաց սույն պայմանագրի կամ լրացուցիչ համաձայնեցված պայմանների, բացառությունների և դրույթների համաձայն հատուցում է կորուստները ստոր բերված կարգով և ծավալներով:

2. Ընդհանուր բացառություններ

Ապահովագրողը չի հատուցում ոչնչացման, վնասի կամ պատասխանատվության հետևանքով անուղղակի կամ անմիջականորեն առաջացող և աճող կորուստները հետևյալ դեպքերում՝

- ա) պատերազմներ, զորքերի ներխուժում, հակառակորդի գործողություններ, ռազմական գործողություններ (անկախ դրանից պատերազմը հայտարարված էր, թե ոչ), խռովություններ, հեղափոխություններ, քաղաքացիական պատերազմներ, ապստամբություններ, գործադուլներ, ռազմական ուժերի կողմից իշխանության զավթում կամ զավթում հակաօրինական ձևով, չարագործների կամ քաղաքացիական կազմակերպությունների և նրանց հանձնարարությամբ գործող անձանց հակաօրինական գործողություններ, դավադրություններ, բռնագրավում, հարկադրական օտարացումներ, կառավարության կամ իշխանության որևէ մարմնի կարգադրությամբ՝ ոչնչացում կամ վնասում,
- բ) միջուկային ռեակցիա, ճառագայթում կամ ռադիոակտիվ աղտոտում,
- գ) Ապահովագրի կամ նրա ներկայացուցիչների միտումնավոր կամ կոպիտ անզգույշ գործողություններ,
- դ) աշխատանքի լրիվ կամ մասնակի դադարեցում:

Բոլոր հայցերում, դատավարություններում կամ այլ գործերում, որոնց շրջանակներում Ապահովագրողը հայտարարում է այն մասին, որ կորուստները, վնասները կամ պատասխանատվությունը, համաձայն (ա) բացառության դրույթների, ապահովագրված չեն սույն պայմանագրով, վնասից, կորուստներից և ոչնչացումից ապահովագրված լինելու փաստի ապացուցման անհրաժեշտությունը դրվում է Ապահովագրի վրա:

3. Ապահովագրության ժամանակահատված

Ապահովագրողի պատասխանատվությունը սկսվում է Պայմանագրում թվարկված նյութերը շինարարական հրապարակ հասցնելուց կամ աշխատանքները անմիջապես սկսելուց հետո՝ անկախ Պայմանագրում նշված ժամկետի այլ հնարավոր պահերից: Յուրաքանչյուր ապահովագրված շինարարական աշխատանքի դիմաց պատասխանատվությունը ավարտվում է, աշխատանքները շահագործմանը հանձնելուց կամ ընդունելուց հետո: Ապահովագրությունը դադարեցվում է Պայմանագրում նշված պահից ոչ ուշ: Ապահովագրության ժամկետի երկարաձգման համար անհրաժեշտ է Ապահովագրողի նախնական գրավոր համաձայնությունը:

4. Ընդհանուր պայմաններ

4.1. Ապահովագրողը պատասխանատվություն է կրում միայն Ապահովագրի կողմից սույն պայմանագրում սահմանված պայմանների կատարման և պահպանման դեպքում, եթե վերջինիս հայտնած տեղեկությունները և, հարցաթերթիկում ու դիմումում բերված պատասխանները՝ ստույգ են:

4.2. Պայմանագիրը և Բաժինը (Բաժինները) համարվում են սույն պայմանագրի անբաժանելի մաս: Պայմանագրում օգտագործվող «սույն վկայագիր» արտահայտությունը ներառում է իր մեջ Պայմանագիրը և Բաժինը (Բաժինները): Յուրաքանչյուր բառ (կամ արտահայտություն), որի համար սույն Պայմանագրի, Պայմանագրի կամ Բաժինի (Բաժինների) որևէ մասում հատուկ նշանակություն է սահմանված, պահպանում է այդ նշանակությունը անկախ այն բանից, որտեղ է նշվում տվյալ բառը (կամ արտահայտությունը):

4.3. Ապահովագրի իր հաշվին ձեռնարկում է անվտանգության բոլոր բանական միջոցներ և հետևում է վնասի, կորուստների կամ պատասխանատվության կանխման և բացառման բոլոր անհրաժեշտ հանձնարարությունների կատարմանը, ինչպես նաև օրենքին և արտադրողի գործադրման հրահանգներին:

4.4. ա) Ապահովագրողի ներկայացուցիչները ցանկացած ժամանակ (բանականի սահմաններում) իրավունք ունեն կատարել օբյեկտի գնում և հսկում, իսկ Ապահովագրի իր հերթին պետք է ներկայացնի ռիսկի գնահատման համար անհրաժեշտ տեղեկությունները և ինֆորմացիա:

բ) Ապահովագրի, անմիջապես՝ հեռագրով կամ նամակով տեղեկացնում է Ապահովագրողին ռիսկի յուրաքանչյուր էական փոփոխությունների մասին և ստեղծված իրավիճակում իր հաշվին ձեռնարկում է անվտանգության համար անհրաժեշտ միջոցներ: Անհրաժեշտության դեպքում ապահովագրության ծավալը և/կամ ապահովագրավճարը պետք է համապատասխանեցվեն:

Եթե ապահովագրության շարունակվելը Ապահովագրողի կողմից գրավոր ձևով չի հաստատվում, ապա Ապահովագրի, սույն պայմանագրի շրջանակներում, իրավունք չունի թույլ տալ կամ կատարել ռիսկի չափը բարձրացնող փոփոխություններ:

4.5. Սույն պայմանագրի շրջանակներում, որևէ պահանջ հիմնավորող դեպքի առաջացման ժամանակ, Ապահովագրվողը պարտավոր է՝

- անմիջապես 24 ժամվա ընթացքում՝ հեռագրով կամ նամակով հաղորդել կորուստների բնույթի և չափերի մասին,

- վնասը նվազեցնելու համար ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցներ,
- պահել վնասված մասերը և ներկայացնել դրանք զննման՝ Ապահովագրողի ներկայացուցիչներին կամ փորձագետին,
- Ապահովագրողի պահանջով ներկայացնել բոլոր տեղեկությունները և փաստաթղթերը,
- տեղեկացնել ոստիկանությունը կոտրանքի հետևանքով կրած վնասների մասին,
- Ապահովագրողը պատասխանատվություն չի կրում այն վնասների, կորուստների կամ պատասխանատվության համար, որոնց մասին չէր տեղեկացվել ապահովագրական դեպքի վրա հասնելուց հետո /24 ժամ/ ժամանակահատվածի ընթացքում:

Ապահովագրողին տեղյակ պահելուց հետո, պահպանելով սույն պայմանները, Ապահովագրողը կարող է կատարել մանր վնասվածքների նորոգում կամ վնասված մասերի փոխարինում: Բոլոր այլ դեպքերում, նախքան վերանորոգման աշխատանքներ կամ փոփոխություններ կատարելը Ապահովագրողի ներկայացուցիչն պետք է տրվի վնասի զննման հնարավորություն: Եթե Ապահովագրողի ներկայացուցիչ կողմից բանական ժամկետի ընթացքում համապատասխան զննումը չի իրականացվել, Ապահովագրողը, հաշվի առնելով ստեղծված իրավիճակը, իրավունք ունի կատարել վերանորոգման աշխատանքներ կամ վնասված մասերի փոխարինում:

Սույն Պայմանագրի շրջանակներում Ապահովագրողի պատասխանատվությունը, վնասված ապահովագրված իրերի համար, դադարեցվում է, եթե չէր կատարվել այդ իրերի անհապաղ մասնագիտական վերանորոգում:

4.6. Ապահովագրողը պարտավոր է ձեռնարկել բոլոր պահանջվող և անհրաժեշտ միջոցները, օժանդակել կամ ընդունել դրանք՝ իրավունքների իրականացման կամ դատական որոշումները բողոքարկելու միջոցների կիրառման նպատակներով, կամ սույն պայմանագրի շրջանակներում այլ անձանց կողմից հատուցում ստանալ, որի վճարման իրավունքը ունի կամ կունենար Ապահովագրողը՝ ուղղակի կամ անուղղակի ձևով կամ պահանջի փոխանցման կարգով կամ իրավունք կունենար սույն պայմանագրի շրջանակներում վնասի հատուցումից հետո, ընդ որում նշանակություն չունի, թե գոյություն ունի կամ էլ անհրաժեշտություն կառաջանա Ապահովագրողի կողմից կիրառել այդպիսի միջոցներ Ապահովագրվողին վնասը հատուցելուց առաջ կամ հետո:

4.7. Սույն պայմանագրի շրջանակներում հատուցվող գումարի վերաբերյալ ծագած վեճերը (այն պայմանով, որ վնաս հատուցելու պարտավորությունը ճանաչված է Ապահովագրողի կողմից) լուծվում են կողմերի նշանակված միջնորդ դատավորի միջոցով (նշանակումը կազմվում է գրավոր ձևով): Դատավորի նշանակման հարցում համաձայնության չգալու դեպքում կողմերը գործը քննարկման են հանձնում երկու միջնորդ դատավորներին: Ընդ որում յուրաքանչյուր կողմը մյուս կողմից գրավոր պահանջ ստանալուց հետո նշանակում է իր միջնորդ դատավորին օրացույցային ամսվա ընթացքում: Եթե վերջինները չեն հանգում միասնական կարծիքի, ապա գործը քննարկման է հանձնվում նրանց կողմից գրավոր ձևով նշանակված գլխավոր միջնորդ դատավորին: Նիստերին մասնակցում են բոլոր դատավորները, ընդ որում գլխավոր դատավորը համարվում է նախագահ: Միջնորդական դատարանի կողմից կայացված որոշումը համարվում է Ապահովագրողի դեմ գործ հարուցելու իրավունքների նախադրյալ:

4.8. Եթե վնաս հատուցելու պահանջը առաջադրվում է խաբեության նպատակով, կամ այդ պահանջի իրականացման համար հաղորդվում կամ օգտագործվում են սխալ տեղեկություններ, կամ եթե սույն պայմանագրից օգուտ քաղելու համար Ապահովագրվողը և/կամ նրա կողմից լիազորված անձը դիմում են խաբեբայական միջոցների, կամ Ապահովագրողը մերժել է վնաս հատուցելու պահանջը, կամ եթե միջնորդական դատարանի կամ միջնորդ դատավորների կողմից կայացված որոշումից հետո երեք ամսվա ընթացքում, համաձայն պայմանավորվածությանը, հայց չի ներկայացվել դատարան, ապա բոլոր պահանջները, սույն պայմանագրի շրջանակներում, մարվում են:

4.9. Եթե վնասի առաջացման պահին սույն պայմանագրի շրջանակներում ոչնչացման, վնասների կամ պատասխանատվության դիսկերի վերաբերյալ գործում է նաև այլ ապահովագրության պայմանագիր, ապա Ապահովագրողը, ըստ վնաս հատուցելու պահանջի, վճարում է միայն նրան բաժին ընկած ապահովագրական հատուցման գումարի չափը:

Բաժին 1. Նյութական վնաս

Սույն պայմանագրի շրջանակներում կողմերը պայմանավորվել են, որ Ապահովագրողը ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում կատարում է նյութական կորուստների հատուցումը՝ պայմանագրում թվարկված իրերին կամ դրանց մասերին պատճառված հանկարծակի և անսպասելի վնասների դիմաց, որոնք պայմանավորված չէին բացառություններում նշված հատուկ պատճառներով և որոնց հետևանքով առաջացել էր նորոգման կամ փոխարինման աշխատանքների անհրաժեշտություն: Հատուցումը կատարվում է կանխիկ դրամով (Ապահովագրողի ցանկությամբ), նորոգման կամ նոր իրերի գնման միջոցով, այն գումարի սահմաններում, որի չափը նշված է Պայմանագրում և չպետք է գերազանցի յուրաքանչյուր դեպքի համար նախատեսված հատուցման լիմիտը և ընդհանուր ապահովագրական գումարը: Ապահովագրողը հատուցում է Ապահովագրվողին ապահովագրական դեպքի հետևանքով կատարած մաքրման ծախսերը, եթե սույն պայմանագրի շրջանակներում տվյալ կորուստները ենթակա են հատուցման և Պայմանագրում դրանց համար սահմանված է հատուկ գումար: Ապահովագրողը հատուցում է Ապահովագրվողին շինարարական հրապարակի շինարարության սարքավորումների և մեքենաների ապահովագրական դեպքի հետևանքով կրած վնասները միայն իր կողմից վավերացված ցուցակին համաձայն:

5. Առանձնահատուկ բացառություններ

Բաժին 1. Նյութական վնաս

Ապահովագրողը պատասխանատվություն չի կրում՝

- ա) պայմանագրում նշված ֆրանշիզայի դիմաց (վնասի հատուցման չափը, որը Ապահովագրողը կրում է յուրաքանչյուր ապահովագրական դեպքի ժամանակ),
- բ) ցանկացած բնույթի անուղղակի կորուստների համար, ներառյալ տուգանքները, խախտումները, պայմանագրի դադարեցումը և տարկետման հետևանքով կրած վնասները,
- գ) սխալ նախագծի հետևանքով կրած վնասների կամ կորուստների համար,
- դ) փոխարինման, վերանորոգման, նյութերի կամ շինարարական աշխատանքների թերությունների վերացման ծախսերի համար (տվյալ բացառությունը վերաբերվում է միայն անմիջապես վնասված մասերի և չի ներառում սարքին մասերի ոչնչացումը և վնասվածքները, որոնք հետևանք էին թերի նյութերի կամ շինարարական աշխատանքների),
- ե) չօգտագործման կամ սովորական եղանակային պայմանների ազդեցության հետևանքով՝ նյութերի մաշվածության, կորոզիայի, օքսիդացման, գների իջեցման համար,
- զ) շահագործման ընթացքում առաջացած շինարարական մեքենաների կամ շինարարական հրապարակի սարքավորումների անսարքության ու մեքենաների և/կամ էլեկտրական սարքերի ներքին անսարքության համար,
- է) ջրային տրանսպորտային միջոցների, ինքնաթիռների, ընդհանուր օգտագործման ճանապարհներին շահագործվող մեքենաների ոչնչացման կամ վնասման համար,
- ը) փաստաթղթերով թղթապանակների, գծագրերի, հաշիվների, թղթերի, դրամի, ցանկացած տեսակի նամականիշերի, փաստաթղթերի, բանկատոմսերի, պարտքի հանձնարարությունների, արժեթղթերի կամ չեկերի ոչնչացման կամ վնասման համար,
- թ) միայն գույքագրության ընթացքում հայտնաբերված վնասների կամ կորուստների համար:

Վերապահություն 1. Ապահովագրական գումարներ

Սույն ապահովագրության համար պահանջվում է, որ պայմանագրում նշվող ապահովագրական գումարները լինեն ոչ պակաս, քան՝

ըստ դրույթ 1-ի.

աշխատանքների ավարտման պահին շինարարական աշխատանքների լրիվ արժեքը, ներառելով վարձատրությունը, նյութերի արժեքը, փոխադրման ծախսերը, մաքսատուրքերը, տուրքերը, ինչպես նաև կառուցախրավ անձի կողմից մատակարարվող նյութերի և շինարարական տարրերի արժեքը,

ըստ 2 և 3 դրույթների.

նույն տեսակի և նույն կարողության ապահովագրված իրերի գնման և շինարարական հրապարակի և շինարարական մեքենաների սարքավորումների վերանորոգման արժեքները: Բացի այդ Ապահովագրողը պարտավորվում է բարձրացնել կամ իջեցնել ապահովագրական գումարները աշխատավարձի կամ գների էական փոփոխությունների դեպքում, ընդ որում բարձրացումը կամ իջեցումը ուժի մեջ է՝ Ապահովագրողի կողմից համապատասխան գրավոր լրացումը կատարելուց հետո: Եթե վնասի առաջացման դեպքում կբացահայտվի, որ ապահովագրական գումարները անհրաժեշտից ցածր են, ապա հատուցման չափը, սույն պայմանագրի շրջանակներում, նվազում է փաստացի և անհրաժեշտ ապահովագրական գումարների հարաբերակցության չափով: Սույն դրույթի գործողությունը տարածվում է յուրաքանչյուր իրի և ծախսային հոդվածի վրա:

Վերապահություն 2. Հայցերի (կորուստների) քննարկման ընթացակարգ

Վնասները և կորուստները, սույն պայմանագրի շրջանակներում, հատուցվում են հետևյալ կարգով՝

- ա) վերացվող վնասի դեպքում, մասհանելով մնացորդային արժեքը, հատուցվում են վերանորոգման ծախսերը, որոնք անհրաժեշտ են ապահովագրված իրերը նախնական վիճակին հասցնելու համար,
 - բ) լրիվ ոչնչացման դեպքում, մասհանելով մնացորդային արժեքը, հատուցվում է ապահովագրված իրերի փաստացի արժեքը (ապահովագրական դեպքից առաջ): Սակայն այդ գումարը չպետք է գերազանցի Ապահովագրի վճարման ենթակա և Պայմանագրում նշված ապահովագրական գումարը: Հատուցումը կատարվում է միայն վերապահությունների և պայմանագրի կանոնների պահպանման և կատարման դեպքում:
- Ապահովագրողը կատարում է ապահովագրական հատուցումը միայն վերանորոգման և մասերի փոխարինման փաստը հաստատող համապատասխան հաշիվները և փաստաթղթերը ստանալուց հետո: Վերանորոգմանը ենթարկվող բոլոր վնասվածքները անհրաժեշտ է շտկել: Սակայն, եթե վերանորոգման ծախսերը ապահովագրական դեպքի առաջացման պահին կգերազանցեն ապահովագրված իրերի արժեքը (ապահովագրական դեպքից առաջ), ապա վնասների շտկումը կատարվում է (բ) կետում սահմանված կարգով:
- Ապահովագրողը կրում է նախնական վերանորոգման ծախսերը, եթե կատարվող աշխատանքները վերջնական նորոգման մաս են և, եթե այդ պատճառով չեն ավելանա վերանորոգման ընդհանուր ծախսերը: Սույն պայմանագրի շրջանակներում չեն հատուցվում փոփոխությունների, լրացումների և/կամ կատարելագործման հնարավոր ծախսերը:

Վերապահություն 3. Հատուցման ծավալի ընդլայնում

Տոն օրերին, գիշերային և արտաժամյա աշխատանքների վարձատրության, շտապ հասցվող բեռների հավելումները, սույն պայմանագրի շրջանակներում, ապահովագրված են համարվում, եթե այդ մասին նախապես կազմված էր գրավոր համաձայնագիր:

Բաժին 2. Քաղաքացիական պատասխանատվություն

Ապահովագրողը հատուցում է Ապահովադիրին վնասները Պայմանագրում նշված առավելագույն ապահովագրական գումարների սահմաններում, գործող օրենսդրությամբ Ապահովադրի պատասխանատվության չափով հետևյալ դեպքերում՝

- ա) երրորդ անձանց մարմնական վնասվածքները և հիվանդությունները դժբախտ դեպքի հետևանքով (մահացու կամ ոչ),
- բ) երրորդ անձանց ունեցվածքին պատճառված կորուստները և վնասվածքները դժբախտ դեպքերի հետևանքով, եթե վերը նշված դեպքերը տեղի են ունեցել շինարարական հրապարակում կամ անմիջապես նրա հարևանությամբ կատարվող 1 Բաժնում նշված շինմոնտաժային աշխատանքների հետևանքով և ապահովագրության գործողության ընթացքում:

Վնասի հատուցման պահանջը ստանալուց հետո, եթե այդպիսի հատուցումը նախատեսված է, Ապահովագրողը Ապահովադրի նկատմամբ պատասխանատվություն է կրում նաև հետևյալի համար՝

- ա) հայցվորի կողմից Ապահովադիրին ներկայացված հայցերի ծախսերը և ծախքերը,
- բ) Ապահովագրողի կողմից գրավոր ձևով համաձայնեցված ծախսերը և ծախքերը միայն այն պայմանով, որ Ապահովագրողի պատասխանատվությունը, սույն բաժնի շրջանակներում, սահմանված է Պայմանագրում նշված պատասխանատվության առավելագույն գումարներով:

Բաժին 2- առանձնահատուկ բացառություններ

Ապահովագրողը չի հատուցում վնասները՝

- 1. պայմանագրում նշված ֆրանշիզայի չափով, որի գումարների սահմաններում Ապահովագրվողը ինքնուրույն է կրում պատասխանատվությունը յուրաքանչյուր ապահովագրական դեպքի համար,
- 2. իրագործման, կրկնակի իրագործման, վերանորոգման կամ փոխարինման ծախսերը, որոնք հատուցվում են կամ կարող են հատուցվել 1 բաժնի շրջանակներում,
- 3. վնասվածքները, տատանումների, հեռացման, հենարան տարրերի թրթռի հետևանքով իրերին, հողին, շենքերին պատճառած վնասները կամ մարմնական և նյութական կորուստները, որոնք առաջացել են այդ վնասվածքների հետևանքով, բացառությամբ լրացումներում վերապահված դեպքերը:
- 4. պատասխանատվություն

- ա) 1 բաժնով լրիվ կամ մասնակի ապահովագրված շինարարական աշխատանքներ իրականացնող՝ ձեռներեցի (ձեռներեցների), կառուցաիրավ անձի (անձանց) կամ այլ կազմակերպությունների աշխատողներին և նրանց ընտանիքների անդամներին պատճառված մարմնական վնասվածքներ և հիվանդություններ,
- բ) 1 բաժնով լրիվ կամ մասնակի ապահովագրված շինարարական աշխատանքներ իրականացնող՝ շինարարական ձեռնարկության (ձեռնարկությունների), կառուցաիրավ անձի (անձանց) կամ այլ կազմակերպության կողմից տնօրինվող, պահվող, խնամքի կամ հսկողության տակ գտնվող իրերի ոչնչացում կամ կորուստ,
- գ) ջրային տրանսպորտային միջոցների, ինքնաթիռների, ճանապարհների շահագործվող մեքենաների օգտագործման պատճառով դժբախ պատահարներ,
- դ) հատուցման կամ այլ տեսակի փոխհատուցման հնարավոր պարտավորությունները, որոնք ընդունված են Ապահովադրի կողմից կամավոր ձևով՝ բացառությամբ այն դեպքերի, որտեղ այդ պատասխանատվությունը գոյություն է ունեցել առանց այդպիսի պայմանավորվածության:

Բաժին 2- հատուկ պայմաններ

- 1. Առանց Ապահովագրողի գրավոր համաձայնության Ապահովադիրը կամ նրա անունից որևէ մեկը իրավունք չունի զիջումների գնալ, առաջարկություններ անել, խոստումներ տալ, վճարումներ իրականացնել կամ ընդունել պատասխանատվություն: Ցանկության դեպքում Ապահովագրողը իրավունք ունի Ապահովադրի անունից իր վրա վերցնել նրա պաշտպանությունը, վնասի կարգավորումը, ինչպես նաև Ապահովադրի անունից վնասի հատուցման կամ հատուցման պահանջների հիմնավորվածությունը պարզաբանելու նպատակով՝ հայց հարուցել: Ապահովագրողը գործի վարման կամ վնասի վերացման ընթացքում օգտվում է գործունեության կատարյալ ազատությունից: Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողին ներկայացնել բոլոր պահանջվող փաստաթղթերը և ամեն կերպ աջակցել նրան:
- 2. Ապահովագրական դեպքի առաջացման ժամանակ Ապահովագրողը յուրաքանչյուր ապահովագրական դեպքի համար կարող է Ապահովադրին վճարել ապահովագրական առավելագույն գումար (մասհանելով կատարված վճարումները) կամ նվազագույն գումար, որի հաշվին բավարարվում է որևէ դժբախտ դեպքի պահանջը կամ պահանջները, ինչից հետո Ապահովագրողը ազատվում է ցանկացած հետագա պատասխանատվությունից տվյալ դժբախտ դեպքի համար սույն բաժնի շրջանակներում: